պատմական շրջանի ուսումնասիրութեան եւ այս ուղղութեամբ մի շարք յօդուածներ լոյս ընծայեց «Հայրենիք» ամսաթերթի մէջ։

ՊՐՈՖ. ԱՆՏՒԱՆ ՄԷՅԵԷ

Սեպտ. 22-ին Փարիզում վախճանուել է յայտնի Պրոֆ. Ա. Մէյեէ, որ իր հայագիտական աշխատանքներով պատուաւոր տեղ ունի գրաւած հայ մշակոյթի զարգացմանը նպաստող գործիչների շարքում։

Մէյեէն ծնուել է 1866-ին Ֆրանսայի Ալլիէ նահանգի Մուլէն աւանում։ Իր նախնական ուսումը ստացել է տեղական վարժարաններում, իսկ բարձրագոյնը՝ Փարիզում։ Արեւելեան կենդանի լեզուների դպրոցում աշակերտել է հայերէնի ուսուցիչ Կարրիերին և 1909-ին ստացել հայերէնագէտի վկայական։ 1890-ին գնացել է Վիէննա, որտեղ մասնաւոր դասեր է առել Ֆ. Միւլլերից եւ Հ. Յակոբոս Տաշեանից։ Յետոյ անցել է Թիֆլիզ եւ Էջմիածին, տեղւոյն վրա ուսումնասիրելու հայերէն լեզուն։ Այս ուղեւորութիւնից վերադառնալով՝ կարդուել է համեմատական լեզուաբանութեան ուսուցիչ Փարիզի Բարձր ուսմանց դպրոցում՝ աւանդելով, ի միջի այլոց, նաեւ հայերէն ձայնաբանութեան դասեր։

Իր ուսուցիչ Կարրիերի մահից յետոյ (1902), յաջորդում է նրան Արեւելեան կենդանի լեզուների դպրոցի մէջ եւ ընտրւում հայերէնի ուսուցիչ։ Այս պաշտօնում նա մնում է երկար տարիներ՝ հասցնելով մի շարք աշակերտներ, որոնցից է եւ պրոֆ. Հրաչեայ Աճառեանը։ 1906-ին ուսուցիչ է դառնում Քոլէժ դը Ֆրանսի։

Դասախօսութիւններից դատ Ա. Մէյեէն թողել է բազմաթիւ ուսումնասիրութիւններ հնդկաեւրոպական բարբառների ծագման, արեւելեան լեզուների բառակազմութեան ու ստուգաբանութեան եւ լեզուաբանական այլ հարցերի մասին։ Նրա հայագիտական գործերից գլխաւորներն են.

1. Notes sur quelques faits de morphologie. Paris, 1809. 2. Notes sur la conjugation arménienne. Note sur le mot տեսութիւն. Paris, 1900. 3. Esquisse d'une grammaire comparée de l'Arménien classique. Paris, 1901. 4. Etimologie Arménienne. Paris, 1904. 5. Observations sur le graphic, - quelques anciens manuscrits de l'Evangile Arménienne. Paris, 1904. 6. Auguste Carrière (1838-1902).Paris, 1902. 7. Alt Armenischer Elementar - Buch, Լայպցիգ, 1903.

Բազմաթիւ յօդուածներ է տպագրել նաեւ Journal Asiatique-ի, «Բանասէր»-ի, «Հանդէս Ամսօրեայ»-ի եւ իր նախաձեռնութեամբ Փարիզ հրատարակւող Revue des Etudes Arméniennes - ի մէջ։